

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

ՌԵՄԱ: ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտե տվյալների՝ 2018 թ. դրությամբ կանայք կազմում են հանրապետության աշխատանքային ռեսուրսների 55%-ը, որից տնտեսապես ակտիվ է ընդամենը 47%-ը: Խնդրահարույց է հատկապես այն փաստը, որ Հայաստանում կանայք ավելի մեծ ներգրավվածություն ունեն մասնագիտական կրթական հաստատություններում, ուստի պետությունը մարդկային կապիտալի զգալի կորուստ է ունենում: Տնտեսապես ոչ ակտիվ կանանց մեջ մեծ է հատկապես երիտասարդ կանանց տեսակարար կշիռը՝ 38%, ինչը պայմանավորված է կանանց սոցիալական դերով, այդ թվում՝ երեխայի խնամքի պարտականությամբ, սոցիալ-մշակութային պատճառներով և այլն:

Կանանց տնտեսական ներուժի իրացման խնդիրը ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրում սահմանված է որպես գործադիրի առաջնահերթություններից մեկը: Միաժամանակ, այն դիտարկվում է «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության և ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման հանձնաժողովի շրջանակներում:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտությունը միտված է վեր հանելու կանանց տնտեսական ակտիվացման արդյունավետ և Հայաստանում կիրառելի քաղաքականությունները:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է՝

- 1) Ուսումնասիրել կանանց՝ աշխատաշուկայում չներգրավվելու պատճառները
- 2) Առաջարկել կանանց տնտեսական ակտիվացման և աշխատաշուկայում ներգրավվելու՝ Հայաստանում կիրառելի քաղաքականություններ

Ակնկալվող արդյունքը

Առաջադրանք 1. Կանանց՝ աշխատաշուկայում չներգրավվելու պատճառների վերհանում

Առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրման և վերլուծության արդյունքում անհրաժեշտ է ներկայացնել, թե որոնք են կանանց՝ աշխատաշուկայում չներգրավվելու հիմնական պատճառները: Գործնական նպատակահարմարությունից ելնելով՝ հետազոտության բնակչությունը (research population) կարող է սահմանափակվել կանանց որոշակի խմբով:

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

Առաջադրանք 2. Կանանց տնտեսական ակտիվացման միջազգային փորձի ուսումնասիրություն

Հիմք ընդունելով առաջին առաջադրանքի արդյունքները՝ անհրաժեշտ է ուսումնասիրել կանանց տնտեսական ակտիվացման միջազգային փորձը՝ համադրելի երկրների օրինակով ներկայացնելով հաջողված ու ձախողված քաղաքականությունները:

Առաջադրանք 3. Կանանց տնտեսական ակտիվացման քաղաքականությունների ներկայացում

Հիմք ընդունելով առաջին և երկրորդ առաջադրանքների արդյունքները, ինչպես նաև առաջնային և երկրորդային տվյալների վերլուծությունը՝ անհրաժեշտ է առաջարկել կանանց տնտեսական ակտիվացման կիրառելի քաղաքականություններ:

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության համար հատկացվող գումարը 1,5 մլն դրամ է, հետևապես՝ ներկայացվող բյուջեն պետք է համապատասխանի սահմանաչափին:

Դիմումատուն պատասխանատու է լինելու իր լոգիստիկ հարցերը կազմակերպելու համար, այդ թվում՝ հանդիպումների կազմակերպման, ճանապարհածախսի և այլն:

Հետազոտության տևողությունը 6 ամիս է:

5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ովքեր կարող են դիմել

- Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանող:
- Կարող են դիմել ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները:
- Ուսանողը դիմումի հետ պետք է ներկայացնի աջակցող նամակ իր բուհի ղեկավարության կողմից:

Հաղթողի ընտրությունը

Մրցույթի հաղթողն ընտրվում է մրցակցային գործընթացի միջոցով, որի ժամանակ դիմողները գնահատվում են ըստ հետազոտության որակի, իրենց ներկայացրած հայտի մեթոդաբանության, հետազոտության համար պահանջվող գումարի, համապատասխան մասնագիտական փորձառության:

ՄՍՀՀ-ի աշխատանքները համակարգվում են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: